

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՌԱՍԿՈ» ԱՄՊԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների (ապահովագրության տեսակների (դասերի), դրանց սակագների) վերաբերյալ սպառիչ տեղեկություններ և մանրամասներ ստանալու համար կարող եք դիմել «ՌԱՍԿՈ» Ապահովագրական ընկերության **հաճախորդների սպասարկման բաժին** կամ զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով`

(+374 10) 54 46 58, 58 50 93

Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ստանալու «ՌԱՍԿՈ» Ապահովագրական ՍՊԸ-ի վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը`

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկատվության պատճենները: Օրենքը կարող եք գտնել` http://www.rasco.am/uploads/files/files_Insurance%20Law%20of%20Armenia_arm.pdf Ընկերության ինտերնետային կայքում տեղ գտած տեղեկությունները կամ փաստաթղթերի պատճենները:

Վերոնշյալ տեղեկությունների կամ փաստաթղթերի ստացման համար պետք է **գրավոր դիմում** ներկայացնել «ՌԱՍԿՈ» ԱՄՊԸ-ի գործադիր տնօրենին` նշելով պահանջվող կոնկրետ փաստաթղթի կամ տեղեկատվության անվանումը: Գրավոր դիմումը կարող է ներկայացվել հետևյալ ձևերով. առձեռն` Ընկերության գլխամասային գրասենյակում, էլեկտրոնային հասցեով` info@rasco.am, կամ փոստով` «ՌԱՍԿՈ» Ապահովագրական ՍՊԸ, ք. Երևան 0001, Թումանյան 8:

Այդ տեղեկությունների (փաստաթղթերի) տրամադրման համար Ընկերությունը կարող է գանձել **համապատասխան վճար**, ինչը չի կարող գերազանցի դրանց պատրաստման համար «ՌԱՍԿՈ» ԱՄՊԸ-ի կողմից փաստացի կատարված ծախսերը: Էլեկտրոնային առաքման դեպքում տեղեկատվությունները կտրամադրվեն անվճար:

Տեղեկությունները (փաստաթղթերը) կտրամադրվեն դիմումը Ընկերության կողմից ստանալու օրվանից հետո` **երեք աշխատանքային օրվա ընթացքում**: